



**ԼԻԴԻԱՆ ԻՆԹԵՐՆԵՅՇՆԼ ԼԻՄԻԹԵԴ  
ԻՆՍՏԻԹՅՈՒՆ  
ԳՈՐԾԱՐՔՆԵՐԻ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ**

**I. ՆՊԱՏԱԿ**

Ինսայդերական գործարքների վերաբերյալ սույն քաղաքականության նպատակն է ապահովել համապատասխանություն Ընկերության ներքին գաղտնի տեղեկություններ տնօրինող անձանց (ինսայդերների) կողմից Ընկերության արժեթղթերի ապօրինի առքն ու վաճառքը և էական տեղեկատվության բացահայտումն արգելող օրենքներին և կանոնակարգերին:

Ստուգող հանձնաժողովը վերահսկում է համապատասխանությունը սույն քաղաքականության պահանջներին:

**II. ԿԻՐԱՌԵԼԻՈՒԹՅՈՒՆ**

Սույն Քաղաքականությունը կիրառվում է սահմանափակումների ենթակա բոլոր անձանց նկատմամբ, ներառյալ՝

Ա. Ընկերության տնօրենների, պաշտոնյաների և աշխատողների,

Բ. Ըկերության հետ գործունեություն իրականացնող խորհրդատուների, կապալառուների, մատակարարների և այլ անձանց, այդ թվում նրանց տնօրենների, պաշտոնյաների և աշխատողների, ովքեր ստանում են կամ ում հասանելի է Ընկերության վերաբերյալ չբացահայտված էական տեղեկատվություն:

Գ. Անձանց, ովքեր տնօրինում են Ընկերության վերաբերյալ չբացահայտված էական տեղեկատվություն, որը ձեռք են բերել Ընկերության հետ հատուկ հարաբերության մեջ գտնվող անձից, էթե տվյալ տեղեկատվությունը ձեռք բերող անձը իմացել է կամ ողջամտորեն պետք է իմանար այդ հատուկ հարաբերության մասին:

Դ. Այն անձանց ընտանիքի անմիջական անդամների, ում նկատմամբ կիրառվում է սույն Քաղաքականությունը:

**III. ՍԱՀՄԱՆՈՒՄՆԵՐ**

**«Մառեցման ժամանակահատված»** նշանակում է ա) եռամսյակային ֆինանսական արդյունքների համար առաջին առևտրային օրվա ավարտին սկսվող ժամանակահատվածը, որը եռամսյակի ավարտից երեք շաբաթ հետո է, և ավարտվում է ֆինանսական արդյունքների հրապարակմանը հաջորդող երկրորդ առևտրային օրը գործարքի ավարտին, բ) ամենամյա ֆինանսական արդյունքների համար առաջին առևտրային օրվա ավարտին սկսվող ժամանակահատվածը, որը եռամսյակի ավարտից չորս շաբաթ հետո է, և ավարտվում է ֆինանսական արդյունքների հրապարակմանը հաջորդող երկրորդ առևտրային օրը գործարքի ավարտին և գ) այլ ժամանակ, երբ էական տեղեկատվություն չի հրապարակվել:

**«Ընկերություն»** նշանակում է «ԼԻԴԻԱՆ ԻՆԹԵՐՆԵՅՇՆԼ ԼԻՄԻԹԵԴ» ընկերությունը և նրա դուստր ընկերությունները:

**«Ընկերության անձնակազմ»** նշանակում է Ընկերության բոլոր տնօրենները, պաշտոնյաները և աշխատողները:

**«Տնօրեն»** նշանակում է «ԼԻԴԻԱՆ ԻՆԹԵՐՆԵՅՇՆԼ ԼԻՄԻԹԵԴ» ընկերության և նրա դուստր ընկերությունների տնօրենների խորհրդի անդամ:

**«Ընտանիքի անսիջական անդամ»** նշանակում է ամուսին, երեխաներ և այլ հարազատներ, ովքեր բնակվում են նույն ընտանիքում, որտեղ բնակվում է այն անձը, ում նկատմամբ կիրառվում է սույն Քաղաքականությունը:

**«Էական տեղեկատվություն»** նշանակում է Ընկերության գործերին և գործունեությանը վերաբերող որևէ տեղեկություն, իրադարձություն կամ հանգամանք (ներառյալ նախկին տեղեկություններում կամ փաստերում փոփոխություն), որն օբյեկտիվորեն կարող է Ընկերության արժեթղթերի շուկայական գնի վրա զգալի ազդեցություն ունենալ կամ Ընկերության արժեթղթերի առք ու վաճառքի հետ կապված ներդրում կատարելու վերաբերյալ որոշում կայացնելիս ներդրողի համար կարևորություն ունենալ: Տեղեկության էական բնույթի վերաբերյալ որոշումը սուբյեկտիվ է և պահանջում է խոհեմություն:

**«Մահմանափակումների ենթակա անձ»** նշանակում է այն անձինք, ում նկատմամբ կիրառվում է սույն Քաղաքականությունը:

**«Արժեթղթեր»** նշանակում է ա) սովորական բաժնետոմսեր, արժեթղթի ընտրանք և ցանկացած այլ արժեթուղթ, որ կարող է ժամանակ առ ժամանակ թողարկվել Ընկերության կողմից, և բ) վաճառքի («փուլ») և գնման («քուլ») օպցիոններ կամ այլ ածանցյալ արժեթղթեր, որոնց արժեքը և առանձնահատկությունները մասամբ կամ ամբողջությամբ կախված են Ընկերության արժեթղթերի արժեքից և առանձնահատկություններից:

**«Ավագ աշխատողներ»** նշանակում է Ընկերության պաշտոնատար անձինք և Ընկերության տեղեկատվության հրապարակման և գաղտնիության պահպանման քաղաքականության իրականացման համար պատասխանատու կոմիտեի կողմից նշանակված այլ աշխատողներ:

«Առևտրային օր» նշանակում է որևէ օր, երբ Տորոնտոյի արժեթղթերի բորսայում կարելի է գործարք կնքել:

#### IV. ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Ա. Չբացահայտված էական տեղեկությունների շահարկումն արգելվում է

Սահմանափակումների ենթակա անձինք իրավունք չունեն ուղղակի կամ անուղղակի կերպով ներգրավվել որևէ գործարքում, որ ներառում է Ընկերության արժեթղթերի առք, վաճառք, նվիրատվություն, փոխառություն կամ գրավադրում այն ժամանակահատվածում, որը սկսվում է սահմանափակումների ենթակա անձի կողմից չբացահայտված էական տեղեկատվության մասին իրազեկվելու օրը և ավարտվում Տորոնտոյի արժեթղթերի բորսայում տեղեկատվության հրապարակմանը հաջորդող երկրորդ առևտրային օրը գործարքի ավարտին:

Բ. Տեղեկատվության բացահայտում

Սահմանափակումների ենթակա անձինք իրավունք չունեն էական տեղեկատվություն բացահայտել որևէ այլ անձի (ներառյալ ընտանիքի անդամները)՝ բացառությամբ սովորական գործունեության ընթացքում ծառայողական անհրաժեշտության սկզբունքով տեղեկատվության բացահայտման: Սահմանափակումների ենթակա անձինք իրավունք չունեն էական տեղեկատվության հիման վրա Ընկերության կամ այլ ընկերությունների արժեթղթերով առևտրային գործարքներ կնքելու (կամ չկնքելու) վերաբերյալ առաջարկություններ անել կամ կարծիքներ հայտնել:

Գ. Պակասադիրքի վաճառք

Սահմանափակումների ենթակա անձինք իրավունք չունեն պակասադիրքի վաճառք իրականացնել կամ ներգրավվել այնպիսի գործարքներում, որոնք ներառում են օպցիաներ, գների տարբերության պայմանագրեր (CFD) կամ Ընկերության հիմքում ընկած արժեթղթերին առնչվող ածանցյալ ֆինանսական գործիքների որևէ այլ տեսակ:

Դ. Կոնյուկտուրայի կարճաժամկետ կտրուկ տատանումների պայմաններում վաճառք

Բացառությամբ օպցիոնների իրավունքի կամ նման, Ընկերության բաժնետոմսերի՝ պայմանավորված գնով առանց հարկ վճարելու ձեռքբերման խրախուսիչ իրավունքի իրացման դեպքերի՝ Ընկերությունն առաջարկում է Ընկերության անձնակազմին գերծ մնալ 6 հաջորդական ամսիների ընթացքում Ընկերության արժեթղթեր գնել կամ վաճառել:

Ե. Արժեթղթերով գործարքների նախնական թույլտվություն

Տնօրենների և ավագ աշխատողների կողմից Ընկերության արժեթղթերի առքի, վաճառքի կամ առևտրային բոլոր առաջարկվող գործարքները նախապես պետք է թույլատրվեն ֆինանսական հարցերով տնօրենի կողմից (կամ, նրա բացակայության

Ժամանակ, գլխավոր տնօրենի կողմից): Նախնական թույլտվության հայտերը պետք է ներկայացվեն գործարքի առաջարկվող ամսաթվից առնվազն երկու աշխատանքային օր առաջ:

## Ձ. Սառեցման ժամանակահատված

Տնօրենները և ավագ աշխատողները չեն կարող սառեցման ժամանակահատվածում Ընկերության արժեթղթերով գործարք կնքել՝ բացառությամբ օպցիոնների իրավունքի իրացման Քաղաքականությամբ նախատեսված դեպքերի: Ֆինանսական արդյունքների հետ կապված սառեցման ժամանակահատվածները ուժի մեջ կլինեն առանց հետագա ծանուցման:

Լրացուցիչ սառեցման ժամանակահատվածներ կարող են նաև սահմանվել որևէ այլ ժամանակ, եթե համարվում է, որ առկա է չբացահայտված էական տեղեկատվություն: Կանոնավոր պլանավորված սառեցման ժամանակահատվածներից բացի այլ սառեցման ժամանակահատված սահմանելու դեպքում ֆինանսական հարցերով տնօրենը այդ ժամանակահատվածի մեկնարկի և ավարտի ամսաթվերի վերաբերյալ պետք է ծանուցի տնօրեններին, ավագ աշխատակազմին և այլ ազդակիր անձանց:

## Է. Հատուկ հանգամանքներ և սահմանափակումներ

Ընկերությունն իրավունք ունի ժամանակ առ ժամանակ Ընկերության արժեթղթերի առևտուր իրականացնելու սահմանափակումներ կիրառել որոշ տնօրենների, պաշտոնյաների, աշխատողների կամ այլ անձնաց նկատմամբ: Այդ դեպքերի մասին ֆինանսական հարցերով տնօրենը հատուկ պետք է ծանուցի:

## Ը. Արժեթղթի ընտրանք

Սույն Քաղաքականությունը չի կիրառվում օպցիոնների իրավունքի իրացման դեպքերում, ներառյալ այդ իրավունքի իրացման անկանխիկ գործարքների դեպքում: Սակայն սույն Քաղաքականությունը կիրառվում է օպցիոնների իրավունքն իրացնելուն անմիջապես հաջորդող Ընկերության արժեթղթերի վաճառքի բոլոր գործարքներին, անկախ այն հանգամանքից, թե արդյոք այդ վաճառքի գործարքը նպատակաուղղված է իրացման գինը վճարելու համար անհրաժեշտ կանխիկ միջոցներ ստեղծելուն, թե հանգեցնում է եկամտահարկի պարտավորության:

## Թ. Ինսայդերական հաշվետվությունների ներկայացում

Արժեթղթերի շուկայի վերաբերյալ Կանադական օրենքների համապատասխան՝ բոլոր տնօրենները, պաշտոնյաները և ցանկացած անձ կամ ընկերություն, որին շահառության կարգով, ուղղակի կամ անուղղակի կերպով պատկանում են Ընկերության՝ շրջանառության մեջ դրված ձայնի իրավունք տվող բոլոր արժեթղթերի քվեների ավելի քան 10%-ը կազմող Ընկերության՝ ձայնի իրավունք տվող արժեթղթերը, պետք է ա) այդ անձի կամ ընկերության առաջին անգամ ինսայդեր դառնալու օրվան և բ) ինսայդերի կողմից Ընկերության արժեթղթերի գնման կամ վաճառքի, նրան Ընկերության արժեթղթեր շնորհելու, Ընկերության արժեթղթերի ընտրանքի հնարավորության շնորհման կամ այդ իրավունքի իրացման, կամ

Ընկերության արժեթղթերի մասնաբաժիններով վճարելի սահմանափակումներով բաժնետոմսեր շնորհելու օրվան հաջորդող հինգ (5) աշխատանքային օրվա ընթացքում ինսայդերական հաշվետվություն ներկայացնեն: Ինսայդերական հաշվետվությունները պետք է ներկայացվեն արժեթղթերի շուկայի՝ Կանադայի շրջանային կարգավորող մարմիններին: Ինսայդերներն իրենք են պատասխանատու իրենց ինսայդերական հաշվետվությունների ներկայացման համար, սակայն կարող են դիմել Ընկերության կորպորատիվ քարտուղարին ինսայդերական հաշվետվության պատրաստման և ներկայացման հարցում աջակցություն ստանալու համար: Հաշվետվությունների ներկայացման այս պահանջները խախտելու դեպքում ինսայդերից կարող են նրա նկատմամբ կիրառելի տույժեր գանձվել: Ինսայդերական հաշվետվությունների ներկայացման հետ կապված հարցերով անհրաժեշտ է դիմել Ընկերության կորպորատիվ քարտուղարին:

Ժ. Հավանական քրեական կամ քաղաքացիական պատասխանատվություն և կարգապահական տույժ

Սահմանափակումների ենթակա անձը կարող է քաղաքացիական պատասխանատվության կամ տույժի ենթարկվել, եթե ներգրավվի Ընկերության արժեթղթերով որևէ գործարքում՝ միաժամանակ տեղյակ լինելով Ընկերության վերաբերյալ կամ Ընկերությանը վնասող էական տեղեկատվության մասին:

Սահմանափակումների ենթակա անձը կարող է նաև պատասխանատվության ենթարկվել որևէ անձի կողմից (սովորաբար՝ այս կամ այն արժեթղթերով գործարքի նպատակահարմարության վերաբերյալ տեղեկատվություն **ստացող** անձ) իրականացված անօրինական գործարքի համար, ում նրանք բացահայտել են Ընկերության վերաբերյալ էական տեղեկատվություն կամ, նման տեղեկություններից ելնելով, խորհուրդներ են տվել կամ կարծիքներ հայտնել:

Սույն Քաղաքականությունը խախտող տնօրենները, պաշտոնատար անձինք և աշխատողները կենթարկվեն կարգապահական տույժի, որը ներառում է սեփական կապիտալում մասնակցության հիման վրա խրախուսիչ ծրագրերում հետագա մասնակցության սահմանափակումներ կամ աշխատանքային պայմանագրի դադարեցում, բայց չի սահմանափակվում դրանցով:

Սույն քաղաքականությունը Տնօրենների խորհրդի կողմից հաստատվել է 2018թ. օգոստոսի 14-ին: